

հարուածել: Բայց թշնամին երեւցաւ, եւ յոյնք իրենց անշարժութեան մէջ մնացին:

Թեպետ այս նոր թշնամուոյն անունը մեծ՝ իրեն կրօնամով կատաղութեան առջեւ մինչեւ այնօր ամէն դիմադրութիւն խորտակուեր էր, բայց Ռշտունեաց իշխանն անսասան կուզեր չափը առնուլ նորա զօրութեան: Ուստի երբ թշնամին գրոհ տուաւ կիրճին մէջ անկասկած, արդէն բաժնուած հայ խումբը կիրճին երկու բարձանց վրայէն սոսկալի նետաձգութեամբ զինք շփոթեց, եւ վերջը այդ ժայռերուն կը ճնկեն դուրս թափելով սպառազէն խումբերը եւ արաբաց շփոթութեան սթափելու ժամանակ չի տալով աչ ու ձախ կը կոտորէին անխնայ, եւ առնելով ինկածներուն կողոպուտը՝ կ'անցնէին Վարդանակերտի մօտէն Երասխայ հունը օգնելու համար այն եղբարց, որ արաբաց ուրիշ մէկ գնդին կատաղութեան զոհ կ'երթային:

Կը շտապէր Թեոդորոս եւ թոյլ ու դադար չէր տար զօրաց, որպէսզի հասնի թշնամուոյն, բայց նա սատանայական արագութեամբ իւր դառնութեան գործեր կատարէր էր եւ ամէն տեղ Նախիջեւանէ մինչեւ ի Գողթն գաւառ, գիւղ, աւան եւ անպատսպար քաղաք աներակ էր եղեր, դէզադէզ մարդկանց դիակներ եւ արեանց ճապաղիք այդ բարբարոս անազակաց հետքերն էին, հուր, սուր, մահ իրենց նշանակներն էին, որ թողէր էին ետեւնէն: Լեռներու, բերդերու ապաստան եալ մարդիկ կ'իջնային գունդագունդ ողբ ի բերան փնտրելու համար իրենց սիրելիները, որ կամ սրոյ ճարակ եղած էին՝ կամ՝ որ անելի սոսկալին էր՝ անողորմ ազգին գերութեան գնացած: Տուն, ամառանոց, եկեղեցի՝ ամէն բան կը միար, ամէն բան արիւն կը հոտեր: Ծեր պատերազմողք, որ կարծէին թէ նոր չի կայ իրենց համար պատերազմի հետեւանք թշուառութեանց մէջ, երբ կը տեսնէին եղած անգթութեանց ու պղծութեանց հետքերն, երբ կը դիտէին յօշոտեալ անդամներ,, կրակի մէջ նետուած կանանց եւ կաթընկեր տղայոց դիակներ, անօգուտ կատաղութեանց վրայ սոսկմամբ կը նայէին եւ գլուխին շարժելով երեսնին անդին կը դարձնէին: Ատոմ Շահունի, որ պարսից հետ եւ դէմ պատերազմած էր տարիներով, որ քուշանաց եւ կովկասային ամէն ժողովրդոց հետ կռուած էր, Սմբատ բազմայաղթի ամէն պատերազմներուն մէջ գտնուելով, եւ շատ բան կ'ըրնար պատմէք եթէ ուզէր խօսիլ, նա եւս, երբ եղածները կը տեսնէր, որ գազանութեան չափն անցեալ էին, երեսը թթուեցնելով «էհ» մը արձակեց:

Իսկ Թեոդորոս, որ ամէն ջանք կ'ըներ օգնելու խեղճ ժողովրդոց, յանկարծ Սուրեն Կամսարական փնտրելով, մէկ կողմ առաւ.